

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԼԿՅԵՐ ԿԵՆՏԿՈՄԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ

ԲԱՆԱԶԵՎԵՐՆ


11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

(Հոկտեմբերի 28-ին 1928 թ.)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ № 911
ՑԵՐԵԿԱՆ—1929

367447-1929



192
W. 145/4



ՀԱՍՏԱՆՈՒՄ ԿԵՆՏՐԱԼ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ

ԲԱՆԱԶԵՎԵՐՆ $\equiv \equiv \equiv$

ՈՒ

$\equiv \equiv \equiv$ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

20419
A $\frac{B}{24105}$

(Հոկտեմբերի 28-ին 1928 թ.)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ № 911

ՑԵՐԵՎԱՆ—1929

Թիմկիս
Պոլիգրաֆստի 6-րդ սւլ.
Գրաւեպար № 2189:
Տիւրմ 8000. Պատկեր № 560.

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԶՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ

ԲԱՆԱԶԵՎԵՐՆ ՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(Հոկտեմբերի 28-ին 1928 թ.)

Կ Ի Մ Ի Շ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ց Ե Ր Ը

ՀԱՄԼԿՅԵՄ Կենտկոմի պլենումն ամբողջութեամբ ու լիովին միանալով Յերիտասարդութեան Կոմունիստական Ինտերնացիոնալի (ԿԻՄ) 5-րդ Կոնգրեսի վերջումներին, գտնում է, վոր այդ վերջումները ճիշտ ուղիներ են ցույց տալիս համաշխարհային կոմունիստական յերիտասարդական շարժմանը՝ բոլոր յերկրներէ աշխատավոր յերիտասարդութեան ամենալայն մասսաները ԿԻՄ-ի դրոշակներէ տակ համախմբելու համար:

Հինգյերորդ Կոնգրեսը անպայման ԿԻՄ-ի պատմութեան մեջ կանցնի, վորպէս կարևոր ուղիներ նշող մի կոնգրես:

Ամբողջ աշխարհի բանվորագլուղացիական յերիտասարդութեան վիճակի մասին կոնգրեսի տված անալիզը, հետո, կոմյերիտական կազմակերպութիւններէ աշխատանքի դրութիւնն ու մեթոդները ստուգելու խնդրում՝ բայլշէիկյան ինքնաքննադատութեան լողունդի տակ կոնգրեսի կատարած հսկայական աշխատանքը և Յերիտասարդութեան Կոմունիստական Ինտերնացիոնալի ծրագրի ընդունումը խոշոր պատմական կարևորութիւն ունեն: Նոր զենքերով զինվեց համաշխարհային կոմյերիտիստութիւնը, ավիլի բարձրացալ նրա ռադիկալակութիւնը:

Առանձնապէս պետք է հիշատակել գաղութային յերկրներէ (Չինաստան, Լատինական Ամերիկա) ներկայացուցիչներէ ակտիվ մասնակցութիւնը կոնգրեսի աշխատանքներին. կոնգրեսը մեծ ուշադրութեամբ քննեց գաղութային հարցերը: ԿԻՄ-ի V-րդ Կոնգրեսն անցալ քաղաքական լիակատար միասնականութեան նշանի տակ՝ Կոմինտերնի Լենինյան դժի հիմունքներով, դա մի նոր ապա-

ցույց ե, վոր ԿԻՄ-ը Կոմիտեերնի ամենավստահելի ջոկատներից մեկն ե եւ վոր Կոմիտեերնի Ծ-ըդ Կոնգրեսինշած խնդիրների կատարման ե ամենից առաջ պատերազմի վտանգի դեմ պայքարելու գործում համաշխարհային Կոմյերիտմիությունը պիտի ընթանա առաջին շարքերում: Դրա հետ միասին կոնգրեսը նորից ապացուցեց ամբողջ ԿԻՄ-ի անհողողող վճռականությունը՝ անողոք հակահարված տալու ամեն տեսակի թեքումներին Լենինյան գծից ե ապագայում ել ամենայն վճռականությամբ պայքարելու համաշխարհային կոմունիստական շարժմանը սպառնացող գլխավոր վտանգի— ուղորտունիստական աջ թիքման ե նրա վերաբերմամբ. հաշտվողական դիրք բռնողների դեմ: Աջ թեքումը կոմյերիտ միության մեջ հաճախ արտահայտվում ե պատերազմի վտանգի թերադնահատումով, կոմյերիտ կազմակերպության միջազգային պարտականություններն արհամարելով ե կոմունիստական յերիտասարդության շարժումը քաղաքական գույնից ու բովանդակությունից զրկելու (դեպուլիտիզացիա) ձգտումով: Աջ թեքման ե հաշտվողականության դեմ պայքարելու համար անհրաժեշտ ե մոբիլիզացիայի յենթարկել ԿԻՄ-ի բոլոր սեկցիաները:

ՀԱՄԼԿՅՅՄ Կենտկոմը վստահ ե, վոր ԿԻՄ-ի գործկոմի ամենայն հաստատականությամբ ու վճռականությամբ կկիրառի Կոնգրեսինշած գիծը, ջանալով բեկում առաջացնել բոլոր սեկցիաների աշխատանքների մեջ՝ այդ սեկցիաները դեպի լայն մասսայական աշխատանքներ մղելու ուղղությամբ ե միաժամանակ աչալուրջ կերպով կհսկի այդ սեկցիաների քաղաքական ճիշտ գծին:

Ամբողջ Կոմյերիտմիության անունից ՀԱՄԼԿՅՅՄ Կենտկոմը ԿԻՄ-ի գործկոմին ե յեղբայրական միություններին խոստանում ե ցույց տալ ամեն տեսակի աջակցություն կոնգրեսի վորոշումներն իրականացնելու գործում ե պարտավորվում ե բոլոր միջոցները գործ դնել այդ վորոշումները ՀԱՄԼԿՅՅՄ-ին երսում անշեղորեն կենսագործելու համար:

Վերջին տարվա ընթացքում, մանավանդ կոնգրեսի շնորհիվ, ՀԱՄԼԿՅՅՄ ավելի յե մոտեցել ԿԻՄ-ի աշխատանքներին, ավելի յե ամրացրել կապերն արտասահմանի յեղբայրական սեկցիաների հետ: Մեր յերիտասարդության մեջ հետաքրքրությունը դեպի միջազգային հարցերը չափազանց աճել են. դա փայլուն ապացույց ե, վոր աճում ե նրա քաղաքական գիտակցությունը: Այնուամենայնիվ միության մասնակցությունը ԿԻՄ-ի կյանքում, ինչպես ե ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքները դեռ ես

չի կարելի բավարար համարել: 8-րդ համագումարի վորոշումներն այդ ուղղութեամբ, գրեթե մնացել են թղթի վրա: Ընդհանուր առմամբ միութեանը դեռ եւ շատ քիչ բան գիտե եյիՄ-ի աշխատանքների մասին. միջազգային հարցերը խիստ դեռ փոքր տեղ են գրավում մեր յերիտասարդութեան քաղաքատեարակչական սխտեմի մեջ, Կոնգրեսին նախապատրաստելու գործը (մասնավորապէս ծրագրի նախագծի քննարկումը) չափազանց թույլ ե յեղել. անբավարար ե յեղել նույնպէս ՀԱՄԼԿՅԵՄ-ի պատգամավորութեան մասնակցութեանը Կոնգրեսի աշխատանքներին: 8-րդ համագումարի վորոշումները՝ միութեան մեջ տարվելիք ինտերնացիոնալ աշխատանքի մասին, իրագործվում են ավելի քան անբավարար չափով: Կենտկոմին կից կազմված որդանը, վորը պետք ե ղեկավարեր ինտերնացիոնալ աշխատանքը միութեան մեջ, դեռ եւ գործի չի անցել, միջազգային աշխատավորները դաստիարակելու, ոտար լեզուներ ուսումնասիրող ընկերութեան ստեղծելու, հրատարակչական գործունեութեան (մասնավորապէս ազգային լեզուներով) ձեռնարկելու հարցերի առթիվ գրեթե վոչինչ չի արված:

Մեր յերկրի գրութեանը թելադրում ե ուժեղացնել ինտերնացիոնալ—դաստիարակչական աշխատանքները: Առանց լայն հիմքերի վրա դրված ինտերնացիոնալ—դաստիարակչական գործի չենք կարող աշխատավոր յերիտասարդութեանը նվաճել, նույնպէս ե չենք կարող յերիտասարդութեանը դասակարգային կրթութեան տալ: Հենց դրա համար ել ՀԱՄԼԿՅԵՄ Կենտկոմը կոչ ե անում ամբողջ միութեանը՝ ձեռք տունել բոլոր միջոցները բոլոր կազմակերպութեաններում ինտերնացիոնալ դաստիարակութեան գործին դարկ տալու համար: Անհրաժեշտ ե կերտուել հետեյալ միջոցները.

ա) Լայն կերպով ուսումնասիրել Կոնգրեսի վորոշումները, մտցնելով այս տարվա քաղուսուցման սխտեմի մեջ. ամենալայն ուշադրութեամբ ուսումնասիրել ԿիՄ-ի ծրագիրը ե, դրա հետ միասին, քննել պրոլետարական յերիտասարդութեան շարժման տեսութեանը (թեորիան):

բ) Ուժեղացնել հրատարակչական աշխատանքը միջազգային շարժման ուղղութեամբ: Հրատարակել հանրամատչելի ե եժան գրականութեան, բարելավել ինֆորմացիայի գործը թի կենտրոնական (ամենից առաջ «Կոմսոմոլսկայա Պրավդայում») ե թե տեղա-

կան մամուլում, ավելի հաճախակի լսել ղեկուցումներ (թե կենտրոնում և թե տեղերում) ԿԻՄ-ի աշխատանքի մասին:

զ) Ավելի ուժեղացնել շեֆական կապն ու զրազրությունը յեղբայրական կազմակերպությունների հետ և ընտրել այդ գործը սիրող հատուկ կազմակերպիչներ:

դ) Ամեն կերպ աջակցել, վոր կոմյերիտականները սովորեն ոտար լեզուներ և խրախուսել մասսաների այդ ուղղությամբ ցուցաբերած նախաձեռնությունը:

յե) Միջոցներ ձեռք առնել յեկող տարվա սկզբից հրատարակելու ԿԻՄ-ի գործկոմի և ՀԱՄԼԿՅՅՄ Կենտկոմի որգանը՝ ամսագրի ձևով. այդ որգանը պետք է լուսաբանի համաշխարհային կոմունիստական յերիտասարդության շարժման թերիայի, պրակտիկայի և պատմության հարցերը:

զ) Կենտկոմին կից ինտերնացիոնալ հանձնաժողովը պետք է սկսի իր պլանային աշխատանքները և ղեկավարի կոմյերիտմիության մեջ տարվող ինտերնացիոնալ աշխատանքները և ամեն կերպ ոժանդակի նրա ծավալմանը:

Կենտկոմի Բյուրոն առաջին հերթին պարտավոր է հսկել այդ ձեռնարկումների կատարման վրա: Անհրաժեշտ է, վոր Կենտկոմի Բյուրոյի նիստերում ավելի հաճախ քննության առնվեն ԿԻՄ-ին և միության ինտերնացիոնալ աշխատանքներին վերաբերող հարցերը: Բյուրոյի անդամներին ու Կենտկոմի աշխատավորներին ևս պետք է մասնակից դարձնել ԿԻՄ-ի Գործկոմի բաժինների աշխատանքներին: Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն նվիրել սպորտային շարժման խնդիրներին ուժեղացնելով Կարմիր Սպորտինտերնին ցույց տրվող ուղնությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել ԿԻՄ-ի սեկցիաներին ավելի լավ ծանոթացնելու ՀԱՄԼԿՅՅՄ-ի աշխատանքների հետ. մասնավորապես անհրաժեշտ է, վոր ԿԻՄ-ի Գործկոմում աշխատող յեղբայրական միությունների ներկայացուցիչները լծվեն մեր միության աշխատանքներին: Պլենումը չի կասկածում, վոր ԿԻՄ-ի Գործկոմն այդ խնդրում ցույց կը տա ամեն տեսակի աջակցություն:

ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ- ՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1) Վերջին ժամանակաշրջանում ՀԱՄԼԿՅԵՄ-ի աշխատանք-ներն ընթանում են դասակարգային ցեղակուրքյունների սրման պայմաններում: Սոցիալիզմի դիրքերի ամրապնդումը, պետական արդյունաբերության հարաճուն ընթացքը և կուլտնտեսություն-ների ու խորհրդային տնտեսությունների յեռանդուն շինարարությունը գյուղում առաջ են բերել դասակարգային թշնամու ակտիվացում և հարձակում մեր վրա:

Թե քաղաքում և թե մանավանդ գյուղում դասակարգային թշնամին ձգտում է դիմադրել սոցիալիզմի արշավին:

Վորպես կուսակցության ոգնականը՝ Կոմյերիտմիությունը հսկայական աշխատանք պետք է ծավալի պրոլետարական ուժերը մաքսիմալ չափերով համախմբելու նպատակով, վորպեսզի սոցիալիզմի շինարարության համար աարվող բոլոր աշխատանքներին յեռանդուն մասնակցություն ցույց տալով, ոժանդակի բանվոր դասակարգի դիկտատուրան ամրապնդելու գործին: Այստեղից ել բղխում են հետևյալ անելիքները.—

ա) Բանվորական և գյուղացիական յերիտասարդության ամենալայն մասսաները ներգրավել արդյունաբերության ռացիոնացման և գյուղի վերակառուցման (կոոպերացիա, կուլտնտեսություն, խորհտնտեսություն) գործին:

բ) Քանակով և վորակով ամրապնդել միություն հիմնական բազան—բանվորական յեվ բաքակային չխվորական կորիզը:

գ) Բարձրացնել միություն անդամների ակտիվությունը, թերություններն ու հիվանդագին յերևույթները համաքծակորին մերկացնելու, անողոք ինքնաքննադատության կիրառման և ներմիութենական դեմոկրատիան աստիճանաբար դարգացնելու միջոցով:

2) Մեր աշխատանքի ներկա ժամանակաշրջանը տնտեսա-կան ու քաղաքական մի ամբողջ շարք դժվարություններով է

ընդհատում: ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի հետ կապված այդ անխուսափելի դժվարությունները՝ դասակարգային պայքարի ավելի ևս սրվող պայմաններում Կոմյերիսմի ուրբյան առանձին խմբակների մեջ վորո՞ւ անհամաձայնություններ են առաջացնում: Կոմյերիսմիուրյունը կոչակցություն չի ևրա Կենսկովի դեկավաււրյամբ պե՞տ և վնւական կռիւ մղի իր տարերբը քաւիանցոյ ոպորտունիւսական իդեոլոգիայի դեմ:

Շարունակելով պայքարել հակահեղափոխության ճահճը գլորված տրոցկիզմի մնացորդների դեմ, միաժամանակ ամենահիմնական ուշադրությունը պետք է դարձնել աջ թեքումը մերկացնելու և արմատախիլ անելու աջ թեքումը ամենամեծ խոչընդոտն է մեր ճանապարհին:

3) Կոմյերիսմիությունը հսկայական դադաւարական-դաստիարակչական աշխատանք պիտի կատարի ոպորտունիզմի և նրա վերաբերյալ հաշտվողական վերաբերմունք ցույց տվողներին հանդեպ: այդ պայքարում յերիտասարդությունը բայլելիկյան վոգով պիտի մարզվի: Դա անհրաժեշտ է այն պատճառով, վոր Կոմյերիսմիությունը, շնորհիւ իրեն հատուկ առանձնահատկությունների (ավելի լայն սոցիալական կազմը, կադրերի ավելի քիչ կոփված լինելը և այլն), ավելի յե յենթակա մանրրութււական ազդեցությունների վտանգին:

Հասարակական-տնտեսական կյանքին մասնակցելը, քաղաքական կրթությունն ու մասսաների մեջ տարվող կուլտուրական աշխատանքը, յերիտասարդությունը միության շուրջը համախմբելն ու միության շարքերի կարգավորումը, դեկավարող կադրերի առաջ քաշելն ու միաձուլելը՝ մի խոսքով ՀԱՄԼԿՅԵՄ-ի հետագա զարգացման ուղղությունը պիտք է ըզխի մի կենտրոնական խընդրից, այն է, Կոմկուսի (ք) հիմնական գծի հաստատուն կիրաւումից և ամեն տեսակի ոպորտունիստական թեքումներն ու տատանումներն անդադար մերկացնելու ու հաղթահարելու գործից:

Այլ վտանգը կոմյերիստական շարժման մեջ հանդես է գալիս իր ամբողջ մերկությամբ: Սոցիալիզմի աճմանն ուղեկցում է պրոլետարիատին թշնամի տարրերի ուժեղացումը, վորը մանր-բութական իդեոլոգիայի յերիտ շարժման մեջ թափանցելու վտանգըն է:

Դա արտահայտվում է նրանով, վոր բուրժուական տարրերը ներս են սղոսկում Կոմյերիսմիության շարքերը, վոր դպրոցական հաստատություններին անհարազատ տարրերը ուժեղացնում

են իրենց գրոհը: Դա արտահայտությունն է դառնում նաև ինքնա-
քննադատության ընդիմանալու և նրա եռությունը չհասկանալու
յերևույթների մեջ. իսկ ինքնաքննադատությունը յերիտասար-
դությունը բայլչեհիկորեն դաստիարակելուն անխաղաղ մանն է. վեր-
ջապես նա արտահայտվում է նաև շովինիզմի աճման, անսկզ-
բունք գործնականություն (делачество) և քաղաքական ակտիվ
կյանքից հեռանալու ձևերով:

Աջ վտանգը գյուղում կուլակային-ունևոր վերնաշերտի այն
փորձերն են, վոր արվում են միության հեղինակությունն ու ղե-
կավարությունը խելելու, կոմյերիտմիության քաղաքական դերը
սքողելու, նրան կուլտ շարժման վերածելու, և բատրակության
ու չքավորության համախմբման գործին դիմադրելու ուղղու-
թյամբ: Աջ վտանգ է նաև այն, յերբ շատ կոմյերիտականներ մո-
ռացության տալով կոլլեկտիվացման խնդիրները, ձգտում են
զարգացնել բացառապես անհատական հիմքերի վրա դրված տըն-
տեսություններ. մի խոսքով աջ վտանգ են բոլոր այն փորձերը,
վորոնք կատարում են Կոմյերիտմիության դասակարգային բաղա-
կանությունը խեղաթյուրելու նպատակով:

Հացամթերման դասերը մեզ ասում են, վոր գյուղերում
բաղամթիվ բջիջներ քարշ ելին դալիս կուլակության հետևից ու
այդպիսով ել կորցրել են իրենց քաղաքական դեմքը: Լայն չա-
փեր է ընդունել այսպես կոչված «հասարակական քողարկման»
այն յերևույթը, յերբ կուլակային-ունևոր տարրերը չքավորներին
և միջակներին անվան տակ սղոսկում են կոմյերիտմիության մեջ:
Մի քանի կազմակերպությունների նման աղտով լցվելը վտան-
գավոր չափերի յե հասել, վորը և ամենաշտապ կարգով պետք է
վերացվի:

Ազգային կազմակերպություններում այդ վտանգները, բացի
վերոհիշյալ մոմենտներից, բնորոշվում են նաև կուսակցության
ազգային քաղաքականության խեղաթյուրումների հետ հաշտվե-
լու և այդ խեղաթյուրումները խրախուսելու յերևույթներով: Այս
նույն վտանգի արտահայտությունն է նաև այն, յերբ բացակա-
յում է սուր պայքարը՝ հանուն կուսակցական գծի անաղարտու-
թյան և ինտերնացիոնալ դաստիարակության:

Այստեղից ամենայն ակներևությամբ ըդիսում է այն, վոր
Կոմյերիտմիության մեջ դասակարգային կայուն գծի համար մղվող
պայքարը միութենական ճիշտ դեկլարություն, յերիտասարդու-
թյունը բայլչեհիկորեն դաստիարակելու և կոմյերիտական աշխա-

տանքը ՀԱՄԼԿՅԵՄ-ի 8-րդ համագումարի վոգով տանելու հիմնական պայմանն է հանդիսանում:

5) Համամիութենական համագումարից սկսած Կոմիերիտ-միությունը խոշոր քայլեր է արել դեպի առաջ, մանավանդ ինքնաբերականության ծավալման յեղի հիմնդրային յերեկոյքների դեմ վեճական պայքար մղելու ասպարեզում:

Կենցաղային քայքայման և նեխման յերեւոյթներն ու մի շարք կազմակերպություններում (Մմուլենակ, Սոչի, Արայոմովսկ, ապա Սամարա, Լենինգրադի քաղաքային կենտրոնական ռայոնը և վերջապես Տվերը, ուր Կենտկոմը ստուգել է միութենական դեկավարությունը), տեղի ունեցած բյուրոկրատական խեղաթյուրումների հայտնաբերման փաստերը մեզ ասում են, վոր հիշյալ «գործերն» ու թերությունները (ինչ մեծության ել վոր նրանք լինեն) վտանգի ազդանշան են տալիս ամբողջ Կոմիերիտմությանը:

Միութենական բոլոր կազմակերպություններն առանց բացառության հիշյալ յերեւոյթների մերկացման դասերն ու պատճառները լուրջ ուսումնասիրության առարկա պիտի դարձնեն:

Մինչեւ այժմ Կոմիերիտիւրյունն այդ ուղղությամբ շատ քիչ բան է արել: Միության աշխատանքի նոր սխտեմը, վոր կառուցված է մասսաների ինքնագործունեությունն ու նախաձեռնությունը զարթեցնելու վրա, դեռևս խոսքից գործի չի վերածվել: Առաջավոր կազմակերպությունների ու բջիջների փորձը թույլ է յուրացվում. նույնչափ թույլ է մասսայականացվում այդ փորձը միության որդանների կողմից: Կազմակերպությունների ու բջիջների մի ահադին մասսա (մանավանդ գյուղում) հետ է մնում քաղաքական կյանքի թափից և աշխատում է «հին ձևով», այսինքն անբավարար է աշխատում:

Միության ապարատն իր վորոշումներն իրականացնելու խնդիրը չի տեղափոխել բջիջները: Դեկավարող ապարատում նոր ձևեր կիրառելու փորձը չի ուսումնասիրվում: Ապարատի աշխատանքը պետք է բնորոշել դեռ ևս անկենդան, բյուրոկրատական խեղաթյուրումներով լիքը մի դերություն (նահանգական ոպերատիվ պլան Տվերում և այլն):

Ակտիվը տակավին չի սովորել մասսաների հրատապ պահանջները կազմակերպությունների քննության նյութ դարձնել և արտացոլել այդ պահանջները դեկավար աշխատանքների մեջ: Միության կոմիտեները չեն կարողանում, ինչպես հարկն է, համախմբել իրենց ձեռնարկումների շուրջը վոչ միայն դեկավարող

թույլ շերտը, ալիւ միութեան անդամները և անկուսակցական յերիտասարդութեան լայն մասսաները: *Λ*

Յուշադրելով աշխատանքի նոր ձևերը, միութենական մամուլը ցույց չի տալիս, թե ավյալ փորձն ինչ դրութեան մեջ և այս կամ այն կոնկրետ հարցում:

Վոր միութեան աշխատանքի մեջ իսկական բեկում առաջ բերելու անհրաժեշտութիւնն ալժամ ավելի, քան յերբեկեց, հասունացել և, փաստ եւ Այն ընդհանուր, անբավարար արդյունքները, վարձացվեցին միջազգային յերիտասարդութեան ուղիւ առիթով բանվորական ու բաւարկային յերիտասարդութիւնը կոմյերիսմիութեան շարքերն ընդունելու գործը նույնպէս հաստատեց:

Շատ կազմակերպութիւններում այդ կոմյերիսմիութեան անդամագրութիւնը (և առհասարակ անկուսակցական բանվորական յերիտասարդութեան մեջ կատարվող մասսայական աշխատանքը) անբավարար և այն պատճառով, վոր կոմյերիսմիութեան մեջ մտնելու համար տարվող ագիտացիան չի բոլորում յերիտասարդութեան հրատապ պահանջներին սպասարկողելու ամենորոյա ակտիվ աշխատանքից:

Տնտեսական և կրթական աշխատանքներն վորպէս կանոն թույլ են արտադրական բջիջներում. կոմյերիսմիութեան ձեռք առած միջոցները միանգամայն անբավարար են յերիտասարդութիւնը արտադրական կշանքի մեջ ներգրավելու համար:

Վորպէս կանոն գլուղական բջիջներում բացակայում և բաւարակները և նրանց տնտեսական-կենցաղային ու իրավական դրութեան կանոնավոր հոգացողութիւնը:

6) կոմյերիսմիութեան աշխատանքը բարելավելու և նրան ամենաբարձր աստիճանին հասցնելու գործը պետք և ընթանա Միութեան Զ-րդ համագումարի վորոշումներն ամենայնպէս զուէն կերպով կիրառելու ճանապարհով:

Այդ տեսակետից անհրաժեշտ և մի վճռական բեկում միութեան բովանդակ աշխատանքի մեջ:

Ինքնաքննադատութեան կիրառման (կոմյերիսմիութեան մեջ) սկզբնական արդշունքները ցույց են տալիս, վոր բոլոր հիմքերը կան նկատարի անցեղ, ավելի յեւանդուն պայտարի համար՝ բնդդեմ միութեան մեջ նկատվող նիւանդագին յերիւլութեան. Այդ պայքարի ծանրութեան կենտրոնը, սակայն, բացահայտորեն ներկայած ու ոտար տարրերից ազատվելու աշխատանքներին զուգընթաց, պետք և լինեն ակտիվ մեջ տարվելիք դաստիարակչական

խորացած աշխատանքները և այն ոգնութիւնը, վոր պետք և ցույց տրվի կոմյերիտմիութեան մասսային ու ակտիվին՝ նմանօրինակ յերկուրների նախագգուեացման յել առաջն առնելու համար:

Աշխատանքի նոր սխտեմն ամենից առաջ նշանակուում և, վնտական կերպով կիրառել ինքնաբերականութիւնը յել իրականացնել նրա արդիւնները: Մինչդեռ ՀԱՄԼԿՅԵՄ-ի Կենտկոմի դիմումը ինքնաքննադատութեան մասին պատշաճ արտացոլում չի գտել կազմակերպութեաններում ու բջիջներում և մեծ քանակութեամբ կոմյերիտականների (մասնավորապէս անկուսակցական աշխատավոր յերիտասարդութեանը) նա ուղղակի անհայտ և: Բանվորական յերիտասարդութիւնը և շարքային կոմյերիտականները տակավին չեն տիրապետում ինքնաքննադատութեան դեմքին:

Միայն այն կոմիտեն, այն բջիջը և այն ակտիվիստը, վորոնք իսկական մասսայական պրոլետարական ինքնաքննադատութիւնը հիմնական լծակ են դարձնում միութենական աշխատանքը բարձրացնելու համար, միայն նրանք են գործում, աշխատում նոր վոգով և իրապիսի ամբապնդում են ՀԱՄԼԿՅԵՄ-ի անքակտելի կապը բանվորագլուղացիական յերիտասարդութեան հետ:

Նոր սխտեմը մի քարացած ձև չի, կարելի է իրառել Միայն-գամից՝ կամպանիայի միջոցով: Նոր ձևով աշխատել, դա նշանակում է կազմակերպել նենց իր՝ յերիտասարդութեան նախաձեռնութեանը կոնկրետ գործերի և շինարարութեան հիմնական հարցերի շուրջը:

Աւստանգի նոր սխտեմը յեկավարութեան համար գործողութեան մի մեքող է ամեն մի գործում:

Աշխատանքի նոր սխտեմը յենթադրում է այնպիսի զեկավարութիւն, յերբ շրջաբերականներ գրելը նվազագույն չափի հասցնի և միութեան բոլոր անդամների ուշադրութիւնը կենտրոնացվի տվյալ ժամանակաշրջանի գլխավոր խնդիրների վրա (որինակ, հավաքական պայմանագրերի կամպանիա, խորհուրդների վերընտրութիւնը, կուլտարալ և այլն), յերբ կոնկրետ խնդիրների կոլեկտիվ վորոշումից բղխեն անկուսակցական յերիտասարդութիւնը միութեան շուրջը համալսմբելու, նրան կոմյերիտմիութեանն անդամագրելու և հասարակական-տնտեսական ու քաղաքական աշխատանքի մեջ ներգրավելու աշխատանքները:

7) Պետք է անհաշտ կռիվ հայտարարել դատարկ խոսակցություններին և խոսքի ու գործի հակասությանը: Յուրաքանչյուր ղեկավար պետք է ստուգվի ամենից առաջ նրանով, թե վորքան նա պատրաստ լի՞լ բնդունակ է մեր լուսնեզները կյանքում կիրառելու համար: Կոմիտեներին և բջիջների աշխատանքն ամենից առաջ պետք է հիմնվի կոմյեբրիտական և յերիտասարդական մասսաների պահանջների և կարիքների վրա, հաշվի առնելով նրանց զանազան խմբակների կյանքի պայմաններն ու առանձնահատկությունները:

Դրա համար անհրաժեշտ է, վոր

ա) Ակտիվը մեգաիմալ չափերով աշխատի մասսայի մեջ, ցերեխում: Պետք է վերացնել միության ակտիվի՝ մասսայից կտրված լինելու յերևութները և անհաշտ կռիվ մղել չինովնիկության և դեպի գործը ցույց տրվող կազմունի վերաբերմունքի դեմ:

բ) Բջիջների և կոմիտեների շուրջը համախմբել այն ակտիվ կոմյեբրիտականներին ու անկուսակցական ակտիվին, վորոնք կատարում են այս կամ այն կոնկրետ գործը, նոր առաջարկներ են մտցնում և այլն: Այդ անհրաժեշտ է նրան համար, վորպեսզի ձևական բեռնավորման փոխարեն կարելի լինի տվյալ ընկերներին շահագրգռել ու վորակավորել կոնկրետ ու նրանց համար հետաքրքրական աշխատանքով, վորպեսզի իրապես կարելի դառնա բանվորական յերիտասարդության ամենալավ ու ընդունակ ներկայացուցիչներին կոչել ղեկավարող աշխատանքի:

գ) Ուշագիւր ղեկավարություն ցույց տալ ամեն տեսակի կամավոր խմբակներին, ձեռք բերած արժեքավոր փորձը հաղորդելով ըովանդակ կազմակերպությանը, նրանց մեջ կատարել հատուկ աշխատանք՝ կազմակերպելով խորհրդակցություններ, դրույցներ և այլն: (Արտադրական խմբակներ, կենցաղային խմբակներ, գյուտարարներ, բնակչակերությունների և զորանոցների աշխատավորներ, բազմաթիվ կուլտուրական նախաձեռնողներ, կոնկրետ գործերի «սիրողները» և «կազմակերպիչները» և այլն):

դ) Սահմանել կանոնավոր ղեկավարություն «թեթև հեծելազորի» ջոկատների վերաբերմամբ, հաստատել սերտ կապ և ամենահամերաշխ աշխատանք Բ. Գ. Տ-ի հետ, «թեթև հեծելազորն» ոգտագործել վոչ միայն բյուրոկրատական խեղաթյուրումները պիտապարատում մերկացնելու, այլև տվյալ բջիջում ինքնաքննա-

դատությունը դարգացնելու աշխատանքները համար. այնպես պետք է զննել դործը, վոր վոչ մի բողոք, վոչ մի խեղացի քննադատական նկատողություն չմնա առանց քննության, իսկ յուրաքանչյուր քննադատողի, յուրաքանչյուր դանդաատավորի, հարկ յեղած դեպքում, բլիշն ու ակտիվը վոչ թե խոսքով, այլ դործով պետք է վերցնեն իրենց պաշտպանության տակ:

յե) Բլիշները և կազմակերպությունները՝ ղեկավարող աշխատանքն այնպես պետք է տարվի, վոր մասսաները լավ ծանոթ լինեն նրան: Դա մի պայման է, վոր ղեկավարներին խապես յենթակա յե դարձնում մասսաների հսկողությունը: Անհրաժեշտ է պարբերաբար հաշիվ տալ մասսաներին. յուրաքանչյուր ղեկավար պետք է սերտ կապ պահպանի յերիտասարդության հետ, վորպեսզի իմանա նրա պահանջներն ու կարիքները և կարողանա այդ պահանջներն ու կարիքները արտացոլել գործնական աշխատանքում:

Ց) Անհրաժեշտ է այժմից իսկ փոխել ղեկավար որդանների աշխատանքի ճնույթը, սկսած ՀԱՄԼԿԵՑՄ-ի Կենտկոմից. միության ապարտադ խոշոր թերություններ ունի:

Դրա համար անհրաժեշտ է. ա) — մոտակա ժամանակներում ամենուրեք կատարել 8-րդ համագումարի վորոշումներն այն դասին, վոր ղեկավարող ակտիվը, վոչ պակաս, քան իր աշխատանքի ժամանակի կեսը, պետք է հատկացնի անմիջապես ձեռնարկել կամ հիմնարկել աշխատանքին: Կենտկոմի Բյուրոն իր անդամներին պետք է գործուղի 8—10 մարզային կոմիտեներ (окружком) և նահանգկոմներ, պարտավորեցնելով նրանց գործնականորեն վերակազմել, վերակառուցել կոմիտեների աշխատանքները:

բ) Վերադաս կոմիտեների ներկայացուցիչները շրջագայումները դարձնել ավելի բեղմնավոր. տեղական կազմակերպություններին նրանք պետք է տան համապատասխան ցուցմունքներ և աջակցեն, վոր այդ կազմակերպությունները վերակառուցեն իրենց աշխատանքը: Տեղերն այցելելու հիմնական նպատակն այսպիսով պետք է լինի այն, վոր գործն ուսմանսիրեն տեղում և ոգնեն կազմակերպությանը՝ նոր ձևով աշխատելու:

գ) Լայն կերպով կիրառել անվճար ինստրուկտոր և կոմիտեների աշխատանքի մեջ ներգրավել նաև ստորին աշխատավորներին, մասնագետներին, ուսանողներին, յերիտթղթակիցներին, «թեթև հեծելագորականներին», կամավորներին և այլն:

դ) Մոտակա ամիսներում միության վողջ ապարատը վերելից վար ամենալուրջ ուսումնասիրության պետք է յենթարկե աշխատանքները վերակառուցելու գործում (նախաձեռնող զրուպպաներ, կոնկուրսներ, հանձնարարությունների մեթոդներ) միության առաջավոր կազմակերպությունների նվաճումները, նկատի ունենալով, վոր մյուս կազմակերպություններին անհրաժեշտ է հաղորդել այն մոտեցումը կամ մեթոդը, վորն առաջ է բերել այս հաջողությունը:

յե) Լուրջ կերպով դնել միության մեջ (ամենից առաջ Կենտկոմում) կատարած աշխատանքի փորձի ամփոփման ու նրանից տեսական ընդհանրացումներ հանելու գործը: «Մոլոդայա գվարդիա» հրատարակչության վրա պարտականություն դնել, վորպեսզի նա հրատարակի միության աշխատանքի հարցերին նվիրված մասնիկի գրականություն:

զ) Կոմիտեների (վորոնց թվում է Կենտկոմի) աշխատանքի պլանը պետք է կազմել այնպես, վոր նրա մեջ չլինեն արդեն կայացած վորոշումների ու դեկրետների անվերջ կրկնությունները. գլխավոր ուշադրությունն այդ խնդրում պետք է նվիրված լինի ներկայումս սուր կերպով դրված և ԲՅԻՆԵՐԻՆ ու անկուսակցական յերիտասարդությանը հուզող հարցերին: Միևնույն ժամանակ պետք է անպայման հաշվի առնել յեղած փորձը և սահմանել աշխատանքի ստուգման ռեժիմ:

ե) Հետևյալ պլենումին դնել Կենտկոմի Բյուրոի ղեկուցումը՝ միութենական ապարատի աշխատանքի բարելավման վերաբերյալ ավյալ պլենումի կայացրած վորոշումների կատարման մասին: Միության ղեկավարող կոմիտեների աշխատանքի բնույթի փոփոխությանը պետք է հետապնդի հետևյալ խնդիրը. ցույց տալ և սովորեցնել ակտիվին, քե ինչպես պեժ է կազմակերպել մասսաները կոնկրետ գործերի շուրջը, ինչպես ամրապնդել ձեռք բերած առիթունները և պատրաստել աշխատավոր յերիտասարդության կյանքի ու աշխատանքի իսկական կազմակերպիչների ու ղեկավարների նոր կադրերը:

Հիշված ամբողջ աշխատանքի հսկայական պատասխանատվությունն ընկնում է միության ակտիվի վրա: Այդ պատճառով միության ակտիվը համերաշխորեն պետք է համախմբվի սկզբունքային քաղաքական դժի, գործնական տղխատանքի շուրջը. նա պետք է ամենուրեք ձեռնամուխ լինի սխտեմատիկ կուսակցական-տեսական կրթություն ձեռք բերելու գործին՝ միաժաման-

նակ հարստացնելով իր փորձն ու վորակը մասսայական աշխատանքների մեջ:

9) ՀԱՄԼԿՅԵՄ-ի պրոլետարական հիմքը գյուղում ամրացնելու հարցը սուր կերպով ծառացել է կոմյերիտական կադմակերպությունների առաջ: Կոմյերիտմիության հետագա զարգացումն անկարելի չէ առանց բատրակությանը և չքավորությանը համախմբելու: Դա անկարելի չէ մանավանդ այն պատճառով: Վոր բատրակներն ու չքավորները դեռևս ղեկավար դիրք չեն զբաղում գյուղական յերիտասարդության մեջ տարվող աշխատանքներում: Միայն կոմյերիտմիության բաժնակ-չքավորական մասի ամուր վիճակը թույլ կտա կիրառել հաստատուն ու ճիշտ պրոլետարական քաղաքականություն՝ միջակ յերիտասարդությանը նվաճելու ու վերադաստիարակելու այլև գյուղի կուլակային-ուճեղ մասի վրա հետևողականորեն գիծ տանելու գործում:

Պետք է արձանագրել, վոր շատ թույլ է յեղել միության աշխատանքը բատրակության ու չքավորության մեջ, վոր տեղի չեն ունեցել մի շարք բջիջների «միջակացման» յերևույթներ՝ ի հաշիվ բատրակների և չքավորների, վորոնց հետզհետե վտարել են բջիջներից, վոր կուլակային-ուճեղ տարրերը թափանցել են միության մեջ վորոշ բջիջներում զբաղելով ղեկավարություն, վոր կոմյերիտմիության միջոցով խորհրդային և կոոպերատիվ որդաններն են սղոսկել դասակարգային տեսակետից մեղ անհարգատ մարդիկ: Նկատի առնելով այս բոլորը ՀԱՄԼԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է կոմյերիտական բոլոր կադմակերպություններին անհապաղ ձեռնամուխ լինել գյուղական չքավորության և բատրակության մեջ յեռանդուն աշխատանք ծավալելու գործին՝ ոգտագործելով աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են չքավորությանը կուլեկտիվացման ու կոոպերացման յենթարկելը, բատրակների իրավունքների պաշտպանելը բատրակային հատուկ կոնֆերենցիաներ գումարելը, բջիջների նախաձեռնությամբ և մասնակցությամբ բատրակների հետ պարբերաբար ժողովներ ու զրույցներ ունենալը, չքավորական խմբակների մեջ աշտատանք տանելը, չքավորական յերիտասարդության համար հատուկ ժողովներ հրավիրելը, բատրակներին ու չքավորներին յեռանդուն կերպով ակտիվ ղեկավարող աշտատանքի առաջ քալելը և ակն:

ՀԱՄԼԿՅԵՄ Կենտկոմի պլենումը միաժամանակ վորոշում է. միության սոցիալական կազմը գյուղում յենթարկել ստուգման,

նպատակ ունենալով ազատվել անհարազատ կուլակային-ուներ տարբերից, Հանձնարարել Կենտկոմի Բյուրոյին հարցը մանրամասնորեն մշակելուց հետո կիրառել կյանքում:

10) Մյուս կազմակերպությունների մեջ (խորհուրդներ, արհմիություններ, կոոպերացիա, կամավոր ընկերություններ) կոմյերիտմիության կողմից տարվող աշխատանքներն ու ժողացնելը միանգամայն անհետաձգելի խնդիր է:

Խորհուրդների առաջիկա ընտրություններին կոմյերիտմիությունը յեռանդուն մասնակցություն պետք է ցույց տա: Կոմյերիտական կազմակերպությունները պետք է խստիվ ստուգեն իրենց ներկայացուցիչների աշխատանքները խորհուրդներում և նրա սեկցիաներում, տալով խորհուրդներին իրենց ամենալավ ուժերը: Կոմյերիտմիության մասնակցությունը խորհուրդների վերընտրության կամպանիային՝ այդ ամենակարևոր քաղաքական կամպանիային մեր յերկրում, պետք է ցույց տա կոմյերիտական բջիջների ու կոմիտեների կենսունակությունը:

Հարկավոր է վերստին ընդգծել այն ահագին նշանակությունը, վոր ունի կոմյերիտմիության և նրա ներկայացուցիչների կողմից կամավոր հասարակական կազմակերպությունների մեջ տարվող աշխատանքը: Այդ կազմակերպությունների ցույց տրվող անփութ և անուշադիր վերաբերմունքին պետք է վերջ տալ ամենակարճ ժամանակամիջոցում:

Կոմյերիտմիությունը յերկրին պիտի տա հազարավոր նոր աշխատավորներ, վորոնք բոլորն էլ սկսած ամենաստորին որգանից ազնվաբար ու յեռանդուն կերպով պիտի աշխատեն: Սակայն հիշատակելով յերիտասարդության միջից առաջ քաշվածների նկատմամբ գոյություն ունեցող կոմսեյվաթիվ վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր, անհրաժեշտ է, վոր բջիջներն աշխատությամբ հետեն յերիտասարդ ընկերների աշխատանքներին և կուսակցության ոգնությամբ վերացնեն առաջ քաշված յերիտասարդների աշխատանքի վերաբերմամբ յեղած բյուրոկրատական մոտեցումները:

Կոմյերիտմիությունը պետք է լայն մասնակցություն ցույց տա հավաքական պայմանագրերի կամպանիային և արհմիությունների առաջիկա համագումարներին. այդ աշխատանքների ժամանակ նա վոչ միայն պետք է պաշտպանի յերիտասարդության կարիքներն ու որինական պահանջները, այլ և պետք է

շարունակի յերիտասարդությունը ուժեղ կերպով արհմիութենական աշխատանքի մեջ ներգրավելու գործը:

Դրա հետ միասին կոմյերիտմիությունը պետք է հետամուտ լինի, վոր արհմիություններն ավելի ուշադիր վերաբերմունք ցույց տան դեպի յերիտասարդության աշխատանքն ու պահանջները:

Շատ արհկազմակերպություններ առաջվա նման ուշադրություն չեն դարձնում յերիտասարդության վրա. վորոշ վայրերում նույնիսկ կրճատվել են ընտրովի արհմ. որգաններում յերիտասարդության ունեցած տեղերը. մի քանի պրոֆկազմակերպություններ ֆնասակար անտարբերություն են ցուցաբերում յերիտասարդությանը սպասավորելու գործում և լավ չեն պայքարում յերիտասարդների աշխատանքին վերաբերող որենադրության խեղաթյուրումների դեմ:

8-րդ համագումարի վորոշումների կատարման համար, ՀԱՄԼԿՅՅՆՄ-ի Կենտկոմի պլենումը ՀԱՄԿՅՆ-ի առաջ հարց է դնում այս աննորմալ դրությանը վերջ դնել. միաժամանակ, Կենտկոմի Բյուրոյին հանձնարարում է այս առթիվ ներկայացնել կոնկրետ առաջարկներ պրոֆմիությունների համագումարին:

11) Դրված խնդիրները վճռելու հաջողությունը կախված է կուսակցության ճիշտ և սխառմատիկ ղեկավարությունից՝ կոմյերիտմիության վերաբերմամբ:

Կուսակցության կողմից Կոմյերիտմիությունը ղեկավարելու հարցի վերստին դնելը ըզխում է մի շարք ամենալուրջ հանգամանքներից: Վերջին ամբողջ ժամանակաշրջանում կուսակցական ամենորյա ղեկավարությունը՝ միութենական կազմակերպությունների վերաբերմամբ, ինչպես պետքն է չի բարելավված: Առաջվա նման Կոմյերիտմիության ստորին կազմակերպություններն են ուղարկվում մեծ մասամբ անպատրաստ և հեղինակություն չունեցող ընկերներ. վոյություն ունեն կուսղեկավարության խեղաթյուրման: ճնշումի ու կուսկոմիտեների կողմից Կոմյերիտմիության վերաբերմամբ ցույց տված մանրակրկիտ խնամակալության բազմաթիվ դեպքեր: Կուսկոմիտեները միշտ և ամենուրեք սահմանափակվում են ընդհանուր կազմակերպչական ղեկավարությամբ, խորապես չուսուսնասիրելով կոմյերիտական կազմակերպությունների ներքին կյանքն ու նրանց մեջ տեղի ունեցող պրոցեսները և չուղղելով կոմյերիտականների առանձին սխալները. մինչդեռ դա անհրաժեշտ է կատարել և այն ել հատուկ

ուշադրությամբ ու յերիտասարդության զարգացման պայմանները լայլ գիտենալով: 14-րդ կուսամասգումարն ասել է. «Կոմյերիտական կազմակերպությունները ճանաչելը և նրանց ամենորոյա աշխատանքներին տեղյակ լինելն, ընկերական անհրաժեշտ զգայունությունն ու տաքտը ճիշտ ղեկավարելու պայմաններն են հանդիսանում»:

Կուսակազմակերպությունների վրա անհետաձգելի մի պարտականություն է ընկնում.— իրական միջոցներ ձեռք առնել ու ժեղացնելու առոյժ կապերն ու բարձրացնելու կուսդեկավարության վերակը՝ (կոմյերիտության վերաբերմամբ):

Ընդառաջ գնալ կոմյերիտական կազմակերպություններին, վորոնք բոլորքում են տեղական կուսակազմակերպությունների սխալ գործողությունների դեմ և վերացնել կուսդեկավարության գործնականում յեղած թերություններն ու առանձին խեղաթյուրումները:

Կուսակազմակերպությունները պետք է ոգնեն կոմյերիտությանը իր գործնական աշխատանքների գործունեյության մեթոդները վերակառուցելու և յերիտասարդության ստեղծագործական աշխատանքները ծավալելու խնդիրներում հիմք ընդունել կոմյերիտության ինքնագործունեությունը, ինչպես վորոշված է կուսակցության և նրա համագումարների կողմից:

Կենտկոմի պլենումը կողմնակից է, վոր հրավիրվի կուսխորհրդակցություն՝ կոմյերիտությունը ղեկավարելու հարցերի վերաբերյալ:

Դրա հետ միասին պետք է վճռական հակահարված տալ այն փորձերին, վոր սրվում են կոմյերիտությունը կուսակցությունից կտրելու նպատակով. վերջին ժամանակ այդ փորձերն արտահայտվում են կոմյերիտության «անկախությունը» պահանջող լողունգի հռչակումով: Կուսդեկավարության սխտեմը միության վերաբերմամբ հանդիսանում է բայլշերդմի և յերիտասարդությունը բայլշերկորեն դաստիարակելու հիմքերից մեկը: Այդ սխտեմի վերացնելը կը նշանակեր ռեվոլյուցիոյ յենթարկել Լենինիդը և հետ գնալ: Այդ պատճառով կոմյերիտությունն ամենավնական հակահետլածով է պատասխանում բոլոր այն փորձերին, վոր արվում են կուսակցությունը Կոմյերիտությանը ճակադրելու և յերիտասարդության վերաբերմամբ գոյություն ունեցող կուսդեկավարության սխտեմը վերանայելու նպատակներով:

Յերիտասարդութիւնը բայլելիւորեն դաստիարակելու և նրան ինքնյան կուսակցութեանը նվիրված լինելու վոգէին ներշնչելու հարցերը յեղել են և մնում են վորպես կոմյերիտական շարժման կենտրոնական առանցք:

II-րդ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Կոմիերիտմիութեան և Լուսժողովմատի ամենակարևոր անելիքները միջնակարգ դպրոցների վերաբերյալ հետևյալներն են.—

Վերակազմել II-րդ աստիճանի դպրոցները, վերածելով նրանց տեխնիկումների և պրոֆդպրոցների, այդ միջոցով ե, վեր կապահովի թե ճիշտ նպատակադրութիւնը և թե առավելագոյն սերտ կապը ժողովրդական տնտեսութեան կարիքների հետ. միաժամանակ պայմաններ կստեղծվեն պոլիտեխնիքմը այդ դպրոցների մեջ արմատացնելու համար:

Վճռական ընթացք ընենլ դպրոցը պրոլետարականացնելու ուղղութիւնմը և պայքարել իդեոլոգիական ճիշտ դրվածքի ու դասակարգային գծի համար, Ուժեղ հակահարված տալ ինչպես մանր-բուրժուական, այնպես ել առհասարակ հնի բոլոր մնացորդներին՝ դպրոցում. այդ բոլորին կարելի յի հասնել միայն դպրոցի դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու և նրա մեջ կոմիերիտմիութեան ունեցած աշխատանքն արմատապես բարելավելու միջոցով:

Ապահովել Լուսժողովմատի պարզորոշ դասակարգային դեկլարութիւնը II-րդ աստիճանի դպրոցների աշխատանքի վերաբերմամբ և հիմնովին բարելավել նրա (Լուսժողովմատի) քաղաքականութիւնը II-րդ աստիճանի դպրոցները վերակազմակերպելու գործում:

Յեռանդուն իդեոլոգիական աշխատանք ծավալել մանկավարժական կադրերի մեջ և վճռական քայլեր անել պրոլետարական յերիտասարդութեան միջից մանկավարժների նոր կադրեր պատրաստելու համար:

II-րդ աստիճանի դպրոցների վիճակը

II-րդ աստիճանի դպրոցների վիճակը ներկայումս ընդորշվում ե հետևյալ հանգամանքներով.

ա) II-րդ աստիճանի դպրոցը, թեև կոչվում ե աշխատանքային դպրոց, բայց ըստ եութեան այդպիսին չե. աշխատանքի սո-

վորեցնելը, նույնիսկ ամենատարրական ձևերով, այնտեղ գոյութիւն չունի. II-րդ կոնցինտրի պրոֆեսիոնալիզացիան՝ գրական արդյունքներ չի տալիս:

բ) Բանվորների և աշխատավոր գյուղացիութեան զավակները սովորողների փոքր տոկոսն են կազմում, իսկ բարձր խմբակներն են ընկնում միայն հատ ու կենտ: Այսպիսով սպառնալիքի տակ և դրվում II-րդ աստիճանի դպրոցի դերը՝ վորպես բարձրագույն դպրոցները բանվորականացնելու գործի սկիզբ:

գ) Դպրոցի դերը չափազանց փոքր և յերիտասարդութիւնը իդեոլոգիականորեն վերամշակելու գործում: Մեծ մասամբ զրանով և բացատրվում բացասական յերևույթների գոյութիւնը սովորողների մեջ: Ամենից վտանգավորը կուլակային-նեպմանական իդեոլոգիայի տարրերն են հանդիսանում. դրանց շարքին են պատկանում անտիսեմիտիզմի աճումը և կրոնական աղանդների ու խմբակների ակտիվութիւնը. զանազան ազդութիւնների միջև նկատվող ներհակութիւնները, վորոշ դեպքերում զանազան տեսակի գաղտնի գործունեութիւնը, վոր արտահայտվում և ընդհատակյա ամսագրերով, թռուցիկներով և խմբակներով. հասարակայնութիւնից հեռանալու յերևույթները, վորոնք արտահայտվում են մեղչանական հայացքներ և վարք ու բարք տարածելով մանավանդ սեռերի միջև գոյութիւն ունեցող փոխհարաբերութիւնների նկատմամբ, և վերջապես բուլվարային ու պոռնոգրաֆիական գրականութեամբ հրապուրվելը, վնասվելն ու լքվելը: Շատ դեպքերում բոլոր այդ յերևույթներն ինքնին դասակարգային կովի առանձնահատուկ արտացոլումն են հանդիսանում զգրոցում, նրանք արտահայտում են մեղ թշնամի ուժերի կողմից կատարված փորձերը յերիտասարդութիւնն իդեոլոգիական իրենց կողմը զրավելու. պարզ և, վոր դրանց նկատմամբ անտարբեր, կրավորական վերաբերմունք ցույց տալը պետք և ընդունվի վոչ միայն վորպես նեղ-մանկավարժական կարգի թերացում, այլ և վորպես ընդհանուր կոպիտ քաղաքական սխալ: Ահա թե ինչու լուսբաժինների կողմից շատ դեպքերում այդ բացասական յերևույթներին հակահարված չտալու համաժամանքը վկայում և այն մասին, վոր նրա գործունեութեան մեջ դասակարգային սլարդորոշութիւնը բավարար չէ:

դ) II-րդ աստիճանի դպրոցներում ակադեմիական ուսուցումը գլխավորապես կենտրոնացված և «եղղամենացիոն» դիսցիպլինների վրա, փաստորեն վերականգնված և քննական-թվանշանային

սխտեմք. կարգապահութիւն սահմանելու մեթոդները և մանկավարժական աղղեցութեան միջոցները ըստ եռութեան շատ ղեկքերում հանդիսանում են վույ միայն վորպես վերադարձ ղեկի հին դպրոցը, ալլև վորպես բնորոշ բացակայութիւն այն հարգանքի, վոր պետք է տանվի ղեկի մանուկների և պատանիների անձնավորութիւնն ու իրավունքները. նման վերաբերմունքը յերեմի պատճառ է դառնում, վոր աշակերտութիւնը դիմե բողոքի այնպիսի ձևերի, ինչպես բոյկոտն ու արատրուկցիան, վոր բոլորովին անթույլատրելի յեն խորհրդային դպրոցում:

II-րդ աստիճանի դպրոցի այս դրութիւնը բուրժուական դպրոցի խորը թափանցած տրագիցիաների հետ միասին հետեանք է նաև ներքնում բերված պատճառների:

Առաջին: Դպրոցները կառուցվել են առանց հաշվի առնելու ժողովրդական տնտեսութեան և աճող սերնդի պահանջները:

Յերկրորդ: Լուսարժիւնների, կուսակցական, արհեստակցական և կոմյերսական կազմակերպութիւնների ղեկավարութիւնն այդ դպրոցների վերաբերմամբ յեղել է անբավարար, ժողովրդական լուսավորութեան որգանները կտրված են յեղել սովորող յերիտասարդութեան մասսաներից և կորցրել են իրենց զգայունութիւնը ղեկի այն պրոցեսները, վոր կատարվում են այդ մասսաների մեջ. լայն հասարակայնութիւնը և սովորող մասսան չի ներգրավված դպրոցի շինարարութեան և աշխատանքի մեջ:

Յերրորդ: Անբավարար է յեղել նյութական բազան, վորը մի քանի անգամ քիչ է, քան ունի մինչպատերազմյան դպրոցը (չենքերի ծանրութեան վածութիւն, աղքատիկ կահավորութիւն, ուսուցչութեան ցածր աշխատավարձը և մի աշակերտի վրա արվող ուսումնա-տնտեսական ծախսերի նորմաների անբավարար լինելը):

Չորրորդ: Խիստ թույլ է տարվել II-րդ աստիճանի դպրոցների ուսուցչութիւնն իդեոլոգիայիս նվաճելու և մանկավարժական նոր կադրերի պատրաստելու աշխատանքը, նույնպես և այդ կադրերը քաղցրներում արմատացնելու գործը:

Հինգերորդ: Անբավարար են գործել աշակերտական կազմակերպութիւնները, վորոնք աշակերտական կյանքի իսկական կազմակերպիչները չհանդիսանալով, չեն կարողանում ընդգրկել յերիտասարդութեան բազմազան պահանջները: Շատ դպրոցներում աշակերտական կազմակերպութիւնները կտրվել են սովորողներից և դարձել են կարգապահական պատժիչ որգաններ:

Վեցերորդ: Լավ չե յեղել ձևավորված կոմյերիտմիության քաղաքական դեմքը դպրոցում: Փոխանակ աշակերտության պրոլետարական ու կիսապրոլետարական միջուկը միաձուլելու և նրա վրա հիմնվելով սովորողների մնացած զանգվածներին վերադաստիարակելու, կոմյերիտականները յերբեմն իրենք են յենթարկվում վոչ պրոլետարական տարրերի ազդեցությանը, գրավում են պոչական դիրքեր և այլն: ՀԱՄԼԿՅԵՄ-ի և պիոներների կազմակերպությունները չեն յուրացրել յերիտասարդությանը նվաճելու համար մղվող պայքարի կարևորությունը այդ բնագավառում և որը որին չեն ղեկավարել կոմյերիտմիության բջիջներն ու պիոներական շրկատները:

Յոթերորդ: Բավարար կերպով չե կիրառվել 2-րդ կոնցենտրի պրոֆեսիոնալիզացիան: Իսկ այն դպրոցներում ուր մտցվում և պրոֆեսիոնալ թեքում, գործը կատարվում և առանց պահպանելու այն անհրաժեշտ պայմանները, վորոնք ապահովում են այդ վերակազմակերպությունը, ինչպես որինակ թեքման սերտ կապակցությունը տեղական աշխատանքի շուկայի պահանջների հետ և նրան (թեքումը) հատուկ կահավորություններ, մասնագիտական մանկավարժական ուժերով և արտադրական պրակտիկայով ապահովելը:

Ուրդ աստիճանի դպրոցների վերակազմաւորյունը յեվ նրանց պրոֆեսարիզացիան

Ժողովրդական լուսավորության սիստեմի վերակազմությունը (2-րդ աստիճանի դպրոցների սեկտորում), վոր ըզխում և տընտեսական և կուլտուրական շինարարության բովանդակ ընթացքից, պետք և կատարվի հետեյալ ուղղությամբ. — II-րդ աստիճանի դպրոցների յերկրորդ կոնցենտրը վերածել պրոֆդպրոցների և տեխնիկումների, յերկարացնելով ուսուցման ժամանակամիջոցը 2-ից մինչև 3—4 տարի. մասսայական պրոֆեսիոնալ կրթությունը (Ֆաբգործուս, պրոֆդպրոց, տեխնիկում) կառուցել յոթնամյա դպրոցի հիմունքներով, վորի համար անհրաժեշտ և յոթնամյա դպրոցների ցանցն այնպես զարգացնել ֆարրիկա-գործարանային կենտրոններում, վոր առաջիկա հնգամյակում յոթնամյա դպրոցները մատչելի դառնան բանվորների բոլոր յերիխանների համար. պրոֆեսիոնալ կրթության սիստեմով (վերակազմված II-րդ աստիճանի դպրոցով) ապահովել բարձրագույն դպրոցների կադրերը:

Կենտկոմի պլենումն առաջարկում է Կենտկոմի Բյուրոյին ռեֆորմի կիրառման կոնկրետ կերպով մշակված պլանի հետ միասին այս առաջարկը մտցնել Համկոմկուսի Կենտկոմ կուսխորհրդակցություն ժողովրդական լուսավորության հարցերի վերաբերյալ, ռեֆորմի սկիզբը հաշվելով 1929-30 ուսումնական տարուց:

Կենտկոմի պլենումը տեղական բոլոր կազմակերպություններին առաջարկում է տեղական կուսակցական, տնտեսական, պրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունների մեջ, Լուսբաժնում, մանկավարժների և աշակերտների շրջանում ու մամուլում լայն պրոպագանդա ծավալել II-րդ աստիճանի դպրոցների ռեֆորմին վերաբերող ՀԱՄԼԿՅԵՄ-ի առաջարկների մասին, վորպեսզի կուսխորհրդակցության մեջ ապահովված լինի Կենտկոմի առաջարկների պաշտպանությունը՝ խորհրդային լայն հասարակության կողմից:

2) Յոթնամյա դպրոցների շինարարության համար անհրաժեշտ է.

ա) Հանրապետությունների Լուսժողկոմատներին՝ մարզերի, շրջանների, նահանգների, ռայոնների և գավառների Լուսբաժինների բյուջեներով միջոցներ նախատեսել յոթնամյա դպրոցների շինարարության և բանվորական կենտրոններում ու թաղերում դպրոցներ ունեցողների վերակազմության համար:

բ) Միջոցներ հատկացնել ֆաբրիկա-գործարանային բոլոր յոթնամյա դպրոցներին կից արտադրական արհեստանոցներ կազմակերպելու համար, այն պայմանով սակայն, վոր յոթնամյա այդ դպրոցը դառնա պոլիտեխնիկական կամ աշխատանքի դպրոց, մի խոսքով դառնա հիմք վերակազմվող ֆաբգործուսի համար:

գ) Յածր աշխատավարձ ստացող բանվորների խմբակներ և քաղաքի չքավորության յերեսանների համար ստիպենդիաներ սահմանել և դա կապահովի ուսանելու հնարավորությունները:

Կենտկոմի պլենումը հրահանգում է կոմյերիտական բոլոր կազմակերպություններին՝ կատարել անհրաժեշտ հարվածային աշխատանք ժողովրդական լուսավորության այդ բնագավառում ես:

Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին, այսուհետև, մինչև II-րդ աստիճանի դպրոցների ռեֆորմի հարցերին վերաբերյալ կուսակցական վորոշումներ ունենալը, միջոցներ ձեռք առնել բարելավելու II-րդ աստիճանի դպրոցների պրոֆեսիոնալացումը հետևյալ միջոցներով. ավիացնել

արհեստագիտական առարկաների ժամերի քանակը, արմատապես բավարարել թե գոյութուն ունեցողների և թե նոր, բացվող արտադրական արհեստաշոցների, կարինետների, լարարատորիաների և այլ դպրոցների կազմակերպութունը:

4) Անհրաժեշտ համարելով արհեստագիտական թեքման ցանցի սերտ կապակցութունը տնտեսության պահանջների և աշխատանքի շուկայի հետ, հանձնարարել Կենտկոմի Բյուրոյին Պետպլանի, Լուսժողկոմատի և Աշխժողկոմատի հետ միասնաբար յերեք ամսվա ընթացքում մշակել արհեստագիտական թեքումների միջոցով մասնագետներ պատրաստելու պլանը, նկատի առնելով մանկավարժական անհրաժեշտութունը:

5) Անհրաժեշտ և դպրոցներն ապահովել արտադրական պրակտիկայով արտադրական թեքումների համեմատ, ըստ վորում պրակտիկանտութունը պետք և վարձատրվի պետմինիստմից վոչ ցածր գրույքներով: Պրակտիկանտության չպետք և թույլ տրվեն այն սովորողները, վորոնց ծնողներն ապրում են անաշխատ յեկամուսներով (առևտրականներ, կուլակներ, կրոնական պաշտամունքի ծառայողներ և այլն): Սովորողներին պլանային կարգով պրակտիկայի ուղարկելու նպատակով անհրաժեշտ և հիմնարկութունների համար սահմանել պրակտիկանտների որոնադրական նորմաներ:

Ուսումնական տարվա ընթացքում դպրոցները պետք և ապահովել գործնական ուսուցման ժամերով, վորի համար անհրաժեշտ և այդ դպրոցները կցել համապատասխան հիմնարկների:

6) Պլենումն անհրաժեշտ և համարում II-րդ աստիճանի դպրոցում սովորողների և այդ դպրոցը ավարտողների համար (ԽՍՀՄ Աշխժողկոմատի կանոնադրութուններին համապատասխան) աշխատանքի բորսաներում և նրանց սեկցիաներում ցուցակագրվելու իրավունք սահմանել՝ յուրաքանչյուր դպրոցի թեքման համեմատ:

7) Միաժամանակ յեռանդուն աշխատանք պետք և տրվի կազմակերպելու այն գործնական ձեռնարկումները, վորոնք II-րդ աստիճանի դպրոցն իր ամբողջությամբ կմոտեցնելին պոլիտեխնիկական դպրոցների տիպին (արտադրության հետ կապ հաստատելը, արհեստանոցներ կազմակերպելը, խորհուրդների և այլ հասարակական կազմակերպութունների հետ կապ պահպանելը, հասարակականորեն — ոգտակար աշխատանք ծավալելը և այլն):

8) Պրոլետարական յերիխաների ակադեմիական հառաջադիմությունն ուժեղացնելու և դպրոցն ավարտելու հնարավորություն ստեղծելու նպատակով անհրաժեշտ է ցույց տալ նրանց նյութական ոգնություն՝ դպրոցական ձեռնարկներ, հագուստ և վոսնաման մատակարարելու, թոշակներ տալու և հանրակացարան կազմակերպելու միջոցով: Պետք է ծավալել փոխոգնության խմբակները, ավելի հառաջադիմ աշակերտներին կցել հետ մնացողներին և այլն: Դպրոցների ընդունելությունների ժամանակ առաջնություն տալ բանվորների, բառարկների և չքավորների յերիխաներին ու ամենամեծ չափերով սպասարկել նրանց: Կոմյերիտմիությունը, աշակերտական կազմակերպությունները, դրոցական խորհուրդները, մանկավարժները պիտի ունենան հետևյալ նշանաբանը. «Պայքար ամեն մի—պրոլետարի և չքավորի յերիխայի համար», այսինքն պայքարել այն նպատակով, վոր հասարակության ջանքերով ստեղծվեն ամենաբարենպաստ պայմաններ դպրոցական լրիվ կուրսն անցնելու համար:

Նույն նպատակներով՝ արհմիությունների միջլայն պրոպագանդա պետք է ծավալել և բանվորներին համոզել, վոր իրենց յերիխաներին դպրոց ուղարկեն մինչև ավարտելը:

Մանկավարժական կադրեր

Կուսակազմակերպություններին, ժողովրդական լուսավորության որդանների և Կոմյերիտմիության հիմնական գիծը պետք է կայանա II-րդ աստիճանի դպրոցների ուսուցչության շրջանում քաղաքական յեռանդուն աշխատանք ծավալելու մեջ. նպատակ պիտի դնել ուսուցիչներին գրավել հասարակական և քաղաքական աշխատանքների, մանկավարժների մարքսիստական պատրաստությունն ուժեղացնելու և դպրոցում յիդած մանրրորժական ազդեցություններին ու դրանց մնացողներին հակահարված տալու: Այդ նպատակներով պետք է գումարվեն ուսուցչական լայն կոնֆերենցիաներ և համագումարներ: Այդ նույն նպատակներով անհրաժեշտ է.—

ա) Ստեղծել մարքսիստ-մանկավարժների խմբեր և խմբակներ ու դրանց միջոցով նվաճելով մանկավարժների գոյություն ունեցող միավորությունները՝ կազմակերպել նորանոր միավորություններ:

բ) Ստուգել Խորհրդային բարձրագույն դպրոցն ավարտած մանկավարժներին ոգտագործելու կարգը ու նրանց աշխատանքի վորակը և կիրառել այնպիսի միջոցներ, վոր կապահովեն յնրիտասարդությունը մանկավարժական աշխատանքներին առաջ քաշելու հնարավորությունները:

գ) Մանկավարժական մամուլը պետք և լայն քննարկման յենթարկի դաստիարակության և հասարակական աշխատանքի հարցերը, ուսուցիչների և սովորողների մեջ գոյություն ունեցող բացասական յերևույթները, դպրոցների աշխատանքներում յեւեան յեկող հնի մնացորդները և այլն:

դ) Կազմակերպել լայն հասարակական-քաղաքական կամպանիա կոմունիստներին և կոմյերիտականներին մանկավարժական բարձրագույն դպրոցներն ու տեխնիկումներն ուղարկելու համար, նպատակ դնելով, մոտակա յերկու տարում կուս-կոմյերիտական կազմը հասցնել այդ դպրոցները ընդունվողների 75 տոկոսին:

յե) Ժողովրդական լուսավորությունը սլրոլետարական կադրերով ամրապնդելու համար 29/30 ուսումնական տարում 1000 կոմյերիտական ու կոմունիստ յենթարկի մարլիիզացիայի մանկավարժական բարձրագույն դպրոցներն ուղարկելու համար: Հանձնարարել Կենտկոմի Բյուրոյին հանրապետական Լուսժողկոմատի հետ միասին նշել այս ձեռնարկումներ իրագործման կարգը: Կենտկոմի պլնումը առաջարկ և մտցնում Լուսժողկոմատ բանվորներին և կոմունիստներին դպրոցում վարչա-տնտեսական աշխատանքների նշանակելու մասին:

Կենտկոմն անհրաժեշտ և համարում Լուսժողկոմատի և Լուսաշխի արհմիության Կենտկոմի հետ միասին հարց հարուցել կառավարության առաջ՝ ուսուցչության (մանավանդ գյուղական) աշխատավարձը բարձրացնելու: Կոմյերիտմիությունը իրական ոգնություն պետք և ցույց տա լուսաշխի միությանը՝ ուսուցչության իրավական խնդիրները պաշտպանելու գործում: Կոմյերիտմիությունը հատուկ ուշադրությամբ պետք և վերաբերի յերիտասարդ ուսուցչուհու (մանավանդ գյուղում) իրավունքները պաշտպանության խնդրին:

Ինքնաքննադատությունը Լուսաշխի կազմակերպություններում և խորհրդային դպրոցներում ծավալելու միջոցով պետք և ջանք թափել ուժեղացնելու ուսուցչության աւելիվությունը

դպրոցի շինարարության գործում. պետք և նաև հետամուտ լինել հաղթահարելու ներկայումս ուսուցչության շրջաններում լայն կերպով տարածված ընկճվածությունը, բարձրադաս մարմիններին քննադատելու յերկյուղը, և այլ նման յերևույթներ:

II-րդ աստիճանի դպրոցների առակերտական կազմակերպություններն ու ՀԱՄԼԿՅԵՄ-ի բջիջները

II-րդ աստիճանի դպրոցների կոմյերիտական կազմակերպությունների հիմնական անելիքը կայանում և նրանում, վոր սովորող յերիտասարդությունը վերամշակի կոմունիստական վուգուվ և, առաջին հերթին, դասակարգայնորեն ձևավորի իրեն սեփական շարքերը: Դրան կարելի յ և հասնել անողոք ու բաց պայքարի ուղիով՝ ընդգեմ աշակերտության մեջ յերևան յեկող հակախորհրդային տարրերի և մեղչանական տրամադրությունների ու վարմունքների: Միաժամանակ յեռանդագին աշխատանք պետք և թափել սովորողներին դուրս բերելու մանր-բուրժուական ազդեցություններից: ՀԱՄԼԿՅԵՄ-ի բջիջները II-րդ աստիճանի դպրոցներում սուր կերպով պետք և հանդես գան նաև կոնսերվատիվ մանկավարժների և թե սովորողների առանձին խմբակների կողմից հին դպրոցի մնացորդները վերստեղծելու համար արվող փորձերի դեմ և համառ, ամենորոյա պայքար մղեն հանուն խորհրդային—աշխատանքի դպրոցի:

II-րդ աստիճանի դպրոցների աշակերտական կազմակերպությունների և կոմյերիտմիությունյան բջիջների աշխատանքն արող շացնելու համար անհրաժեշտ և.—

1) Վերկազմել սովորող յերիտասարդության մեջ ՀԱՄԼԿՅԵՄ-ի կողմից տարվող աշխատանքների ղեկավարությունն այնպես, վոր ղեկավարության գործը լինի վուջ թե առանձին անհատների, այլ կոմյերիտմիության կոմիտեների ու կազմակերպությունների գլխավոր գործը:

2) Կոմյերիտական ու պիոներական աշխատանքի նվաճումները (կամավորություն, նախաձեռնող գրուպպաներ, կոնկրետ պատվերների մեթոդը) փոխադրել դպրոցական բջիջների ու պիոներական ֆորպոստերի պրակտիկայի մեջ և վերակազմել նրանց աշխատանքը դպրոցի կյանքի բոլոր կոկմերն ընդգրկելու ուղղությամբ:

3) Այսուհետև լայն կերպով գործադրել կոմերիտմիության կողմից հրավերվող դպրոցական բջիջային ակտիվի, պիտեներական ֆորպոստների և աշակերտական խորհրդակցությունների, կիրառումը:

4) Կադմակերպել դպրոցական բջիջների, ֆորպոստների և ինքնավարության մարմինների կանոնավոր հրահանգումն, ակտիվ կոմերիտականներին և կուսակցականներին կցել դպրոցներին (մանավանդ այնտեղ, ուր չկան կոմունիստ մանկավարժներ) աշակերտական կադմակերպություններին:

5) Կոմերիտմիությունն իր վրա պիտի վերցնի գիտության առանձին հարցերի, տեխնիկայի, բնագիտության և արվեստի շուրջը ուսանողական յերիտասարդության լայն շարժում կադմակերպելու նախաձեռնությունը: Շարժման խոշոր չափերով ծավալվելու դեպքում, անհրաժեշտ և խմբակները միացնել և կադմակերպություններ ստեղծել:

6) Անհրաժեշտ և նաև, վոր անկուսակցական աշակերտության ակտիվ մասը ևս լայն չափերով ներգրավվի դպրոցական ինքնավարության և հասարակական աշխատանքի մեջ այն հաշվով, վոր ապահովված լինի Կոմերիտմիության ղեկավարությունը. բոլոր կադմակերպությունները բնավ չպետք և լցնել ՀԱՄԼԿՅԵՄ-ի անդամներով, պիտի զբաղվել և անկուսակցականներին:

7) Անհրաժեշտ համարել []-րդ աստիճանի դպրոցներում սովորող յերիտասարդության լայն կադրերի կարիքները սպասարկող ամսագիր հրատարակել:

8) Կոմերիտական կադմակերպությունները լուսաբաժինների և արհմիությունների հետ միասին պետք և մի շարք միջոցներ ձեռք առնեն խորհրդային հասարակայնությունը՝ ֆարգործկոմները, կուլտանաձևաժողովները և կոմերիտմիության ֆարբրիկագործարանային բջիջները դպրոցի աշխատանքները գրավելու. այդպիսով կոժանդակեն ծնողական ժողովների և աշակցող լուրժակների գործունեյության աշխուժացմանը:

9) Ժողովրդական լուսավորության օրգանների բյուջեներով միջոցներ հատկացնել դպրոցների ակումբային աշխատանքներին և խոշոր դպրոցների ֆորպոստների ղեկավարներին՝ վարձատրելու: Խոշոր Լուսաբաժինների շտապների մեջ մտցնել այն աշխատավորներին, վորոնք դպրոցում հատկապես զբաղվում են

ՀԱՄԼԿՅԵՄ-ի, պիոներների և մանկական հիմնարկությունների աշխատանքով:

10) Պլենումը Կենտկոմի Բյուրոյին առաջարկում և մշակել ՀԱՄԼԿՅԵՄ-ի բջիջների կողմից II-րդ աստիճանի դպրոցներում տարվող աշխատանքի կանոնադրությունը:

11) Պլենումը Կենտկոմի Բյուրոյին առաջարկում և հատուկ նամակով դիմել II-րդ աստիճանի դպրոցների կոմյերիտականներին, աշակերտներին և մանկավարժներին և պաշտպանել II-րդ աստիճանի դպրոցների վերակազման հարցերը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԻՄ-ի հիմնական հարցերը	3—6
Իրնքնաքննադատութիւնը և միութենական ղեկավարման խնդիրները	6—20
II աստիճանի Վարդի աշխատանքի մասին	21—31

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002271

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.

A $\frac{\text{II}}{24105}$

094.